ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՏԵՐ ՏԵՐ ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ծանր կորուստ կրեց հայ ժողովուրդը: 1994 թվականի օգոստոսի 18-ին, երկարատև հիվանդությունից հետո, վախճանվեց Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայ ժողովուրդը և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին կորցրին իրենց մեծ երախտավորին, որը շուրջ քառասնամյա իր գործունեությունն ամբողջովին նվիրեց ազգային միասնության ամրապնդման, հոգևոր վերածնության և հայկական պետականության վերականգնման վեհ գործին:

Վեհափառ Հայրապետն անցել է հայ հոգևորականի երկար ու բեղուն ճանապարհ: Ծնվել է 1908 թ. սեպտեմբերի 20-ին Բուխարեստում: Պալճյանների ընտանիքում: Ապագա կաթողիկոսը՝ Լևոն-Կարապետ Պալճյանը, նախնական կրթությունը ստացել է Բուխարեստում, այնուհետև 1936-ին ավարտել է Բուխարեստի պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության բաժանմունքը, ուսանել նույն համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում, 1937-ին հրատարակել է «Հերկ» մշակութային-հասարակագիտական ամսագիրը: 1943-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերանվանվելով Տեր Վազգեն: 1948-ին Գևորգ Զ Կաթողիկոսի կողմից ստացել է Ծայրագույն վարդապետական տասը աստիճաններ և նույն թվականին ընտրվել ռումինահայ թեմի առաջնորդ, ապա՝ 1951-ին ձեռնադրվել եպիսկոպոս:

1955 թ. սեպտեմբերի 30-ին Վազգեն եպիսկոպոս Պալճյանը ընտրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս: Այս պահից ավելի ցայտուն է դառնում Վեհափառ Հայրապետի հայրենանվեր տքնանքը: Իր գահակալության առաջին իսկ տարիներից նա ձեռնարկեց ծավալուն աշխատանքներ՝ շենացնելով Մայր Աթոռը, վերաբացելով Վեհարանը, Գևորգյան հոգևոր ճեմարանը, տասնամյակներ լռած եկեղեցիներ ու վանքեր, կազմակերպելով նորանոր հոգևոր թեմեր: Նա կարողացավ աթեիստական պետական մեքենայի անթաքույց ճնշման պայմաններում պահպանել և ապրեցնել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին՝ իր կառույցներով և առաքելությամբ:

Վեհափառ Հայրապետի գիտական, աստվածաբանական, մանկավարժական երկասիրությունները հայ հոգևոր մշակույթի գանձարանի մնայուն արժեքներից են: Ի նշան արգասաբեր գիտական և հոգևոր գործունեության, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան 1991-ին նրան ընդունում է պատվավոր ակադեմիկոս:

Մեծ է նրա դերը աշխարհասփյուռ հայ գաղթօջախները և եկեղեցիները Մայր Հայրենիքի շուրջ համախմբելու գործում:

Իբրև ժողովրդականություն վայելող հեղինակություն, համազգային զարթոնքի փորձություններով լի տարիներին նա իմաստուն հորդորներով շրջահայաց գործողությունների է կոչում իր հոտին, ամենայն կարեկցությամբ աջակցություն ապահովում բազմահազար հայ փախստականներին, գոտեպնդում Լեռնային Ղարաբաղի ազատամարտի զինվորներին: Նրա հայրական օրհնությամբ կնքվեց Հայաստանի անկախության հանրաքվեի վավերագիրը, նրա հայրական օրհնությամբ իրենց առաքելությունը ստանձնեցին Հայաստանի Հանրապետության առաջին նախագահը և խորհրդարանը: Վեհափառ Հայրապետը մեծագույն ավանդ ունեցավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծման գործում: Եվ ի գնահատումՀ ազգային ու հոգևոր արժեքների պահպանության և զարգացման գործում դրսևորած անձնուրաց նվիրումի ու մատուցած բացառիկ ծառայությունների, 1994 թ. հուլիսի 28-ին նա առաջինն արժանացավ Հայաստանի Ազգային հերոսի բարձրագույն կոչմանն ու Հայրենիքի շքանշանին:

Հայոց 130-րդ Հայրապետը մեր ազգային ու պետական գոյության հավերժական ճանապարհին թողեց իր բացառիկ արժեքավոր հետքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 18, 1994 թ.